ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՄՈՎՍԵՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Հայտնի է, որ սոցիալական կյանքն ընթանում է ոչ միայն և ոչ այնքան մարդ-մարդ հարաբերությունների ձևաչափով, որքան մարդ-սոցիալական ինստիտուտ հարաբերությունների համակարգում: Վերջինս գոյություն ունի անկախ այն բանից՝ հանրային կյանքը կազմակերպող գլխավոր կառույցը պետությունն է, թե ավանդույթը կամ կրոնը: Սոցիալական ինստիտուտը պատմության ընթացքում տարերայնորեն ձևավորված կամ մարդկանց կողմից նպատակային ստեղծվող համատեղ կյանքի ձև է, որն անհրաժեշտ է հասարակության կամ դրա որևէ մասի սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային կամ այլ պահանջմունքները բավարարելու համար[1]: Սոցիալական ինստիտուտների գործառական թերևս գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանք, շնորհիվ ձևավորված կայուն կառուցվածքների, գրված և չգրված օրենքների, որոշիչ ազդեցություն են ունենում մարդու վարքի վրա:

Տերմինի առաջացումը կապված է Ջամբատիստա Վիկոյի անվան հետ, ով օգտագործում է «սոցիալական ինստիտուտ» հասկացությունը քաղաքացիական հարաբերությունները բնութագրելու համար[2]: Նրանից հետո հասկացությունը լայն կիրառություն ստացավ զարգացող սոցիոլոգիայի շրջանակներում, իսկ առհասարակ ինստիտուցիոնալ մոտեցումը կամ մեթոդը իր սկիզբն առնում է սոցիոլոգիայի՝ որպես գիտության հիմնադիրներ Օգյուստ Կոնտից և Հերբերտ Սպենսերից:

Մասնավորապես, Հ. Սպենսերի հայտնի աշխատության կենտրոնական գաղափարներից մեկն այն է, որ պետության մեջ, ինչպես կենդանի մարմնում, անխուսափելիորեն առաջանում է կարգավորիչ համակարգ: Հասարակության զարգացման ընթացքում ձևավորվում են ղեկավարման բարձրագույն կենտրոններ և ենթարկող կառույցներ[3]: Հ. Սպենսերը, ըստ էության, հասարակության կյանքը դիտարկում է որպես սոցիալական կայուն երևույթների կամ հաստատունների հարաբերություն, որոնք հետագայում կոչվեցին սոցիալական ինստիտուտ-

[1] Տե՛ս «Փիլիսոփայական հանրագիտարան», Ստենֆորդ / http://plato.stanford.edu/entries/social-institutions/

[2] Տե՛ս **Джамбаттиста В**. Основания новой науки об общей природе наций. М., Киев, 1994:

[3] Տե՛ս **Spencer H.** First principles. N.Y., 1898:

ներ: Արդեն որպես գիտական հասկացություն «սոցիալական ինստիտուտ» տերմինը կիրառել է Կ. Մարքսը, ով այն բնութագրում է որպես «պատմական զարգացման արդյունք և մարդու գոյության սոցիալական ձև»[4]:

Սոցիալական ինստիտուտը բնութագրելու համար անհրաժեշտ է անդրադառնալ դրա կառուցվածքային և գործառական բնութագրիչներին: Այսպես, յուրաքանչյուր ինստիտուտ նախևառաջ որոշակի սոցիալական կառույց է (պետական, ավանդական-մշակութային, քաղաքակրթական և այլն), այլ կերպ ասած՝ համակարգ, որը գործում է համաձայն իրավական կամ բարոյական նորմերի, իներցիայով կամ նպատակաուղղված և այլն:

Որպես սոցիալական ինստիտուտի օրինակներ կարող են դիտարկվել ընտանիքը, տնտեսությունը, կրթությունը, քաղաքական, անվտանգության և արդարադատության համակարգերը, ինչպես նաև ինստիտուտացված ավանդական կապերն ու հարաբերությունները, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ, օրինակ, կոռուպցիան: Բոլոր դեպքերում խոսքն այնպիսի երևույթների մասին է, որոնք տվյալ հասարակության զարգացման կամ փոխակերպման ընթացքում իրենց վրա են վերցրել սոցիալական հարաբերությունների ծանրաբեռնվածությունը, ձևավորվել որպես լեգիտիմ կառույցներ և ստացել որոշակի գործառույթներ, որոնք իրենց հերթին կրում են ոչ թե պատահական, այլ անհրաժեշտ բնույթ:

Այն, որ ինստիտուտների գործառույթները սոցիալական անհրաժեշտություն են, հիմնավորվում է ինչպես հասարակական կյանքի պատմական փորձով, այնպես էլ մարդկանց սոցիալականացման տրամաբանությամբ, որը ենթադրում է անհատի կողմից սոցիալական տվյալ ինստիտուտի գործունեությունը կարգավորող իրավական և բարոյական նորմերի ընդունում ու իրականացում, որքան էլ դրանք հաճախ տարբերվում են կամ նույնիսկ հակասում առանձին անհատների պատկերացումներին և նպատակներին:

Սոցիալական ինստիտուտների գործառույթների օբյեկտիվ և անհրաժեշտ բնույթը փաստվում է ևս մի հանգամանքով: Ինստիտուցիոնալ ճգնաժամի առաջացման գլխավոր պատճառը հենց սոցիալական ինստիտուտի գործառույթի խաթարումն է, ինչը նշանակում է, որ ընտանիքի, եկեղեցու, պետության կամ մեկ այլ ինստիտուտի բնականոն գործունեության առաջնային պայմանը հանրային հարաբերությունների համակարգում նրա գործառույթների պահանջվածությունն է և դրանք իրականացնելու հնարավորությունը:

Ինչպես նշում է Հ. Հովհաննիսյանը, սոցիալական ինստիտուտի գործունեական ճգնաժամը կամ ինստիտուցիոնալ ճգնաժամը վրա է

---

[4] **Маркс К.** К критике гегелевской философии права // **Маркс К., Энгельс Ф.** Соч. Изд. 2-е, т. 9, с. 263.

հասնում այն ժամանակ, երբ կառույցը դադարում է իրականացնել իր առաջնային գործառույթները[5]: Դրա հետևանքով ի հայտ են գալիս սոցիալական ինստիտուտի ճգնաժամի մասին վկայող մի շարք օրինաչափություններ: Մասնավորապես, ճգնաժամի հետևանքով՝

ա. տեղի է ունենում տվյալ ինստիտուտի գործառույթների վերաբաշխում այլ ինստիտուտների վրա, այլ կերպ ասած՝ սոցիալական համակարգի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով այլ ինստիտուտներն իրենց վրա են վերցնում նախորդի չկատարած գործառույթը: Դրա վառ օրինակ է դպրոցի՝ որպես ընդհանուր հանրակրթական համակարգի ճգնաժամի հետևանքով կրթական բուն գործընթացների վերաբաշխումը կրկնուսույցների ինստիտուտի վրա: Սոցիալական ինստիտուտի գործառույթի վերաբաշխումը տեղի է ունենում անխուսափելիորեն, որովհետև գործառույթի իրականացումը *սոցիալապես անհրաժեշտ* է և պետք է իրացվի որևէ ինստիտուտի մակարդակում: Ըստ այդմ, այլ կառույցի գործառույթն իրականացնող սոցիալական ինստիտուտը նաև թերի է իրականացնում սեփական գործառույթները, որոնք իրենց հերթին ժառանգվում են մեկ այլ ինստիտուտի կողմից և այլն: Օրինակ՝ տնտեսավարող սուբյեկտները կարող են սկսել զբաղվել աշխատակիցների կրթությամբ, կամ բանակը՝ զինծառայողների դաստիարակությամբ:

բ. Փոխվում է նաև սոցիալական ինստիտուտի գործառույթների առաջնահերթությունը, ավելի ստույգ՝ առաջնային են դառնում երկրորդային, երրորդային նշանակության (ոչ էական) գործառույթները: Օրինակ՝ բուհը, լինելով առաջին հերթին մասնագետ պատրաստող հաստատություն, ճգնաժամի պատճառով կարող է սկսել իրականացնել նախևառաջ իր երկրորդային գործառույթները՝ նպաստել ուսանողների սոցիալականացմանը, դառնալ ուսանողների շփման միջավայր և այլն:

գ. Տեղի է ունենում նոր սոցիալական ինստիտուտների ձևավորում, ինչը վկայում է, որ սոցիալական իրականությունը (հարաբերությունների համակարգը) փոխվել է, և ավանդական սոցիալական ինստիտուտներն այլևս անկարող են արձանագրել և կրել փոփոխվող հարաբերությունները: Նոր սոցիալական ինստիտուտի վառ օրինակ է կրկնուսույցների ինստիտուտը, որն առաջացավ որպես հանրակրթական համակարգի ճգնաժամի հետևանք, և վերջին շրջանում Հայաստանում պետական տարբեր կազմակերպությունների կողմից բացվող կրթական հաստատությունները՝ դիվանագիտական դպրոց, ֆինանսական դպրոց և այլն, որոնք կոչված են լրացնելու դպրոցների և բուհերի կողմից տրվող թերի կրթությունը:

դ. Առաջացող նոր սոցիալական ինստիտուտները ունեն ևս մեկ առաքելություն. դրանք վերականգնում են ճգնաժամի պատճառով մաս-

---

[5] Տե՛ս **Հովհաննես Հովհաննիսյան,** Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Եր., 2003:

նատված հասարակական հարաբերությունների ամբողջականությունը՝ ապահովելով գործառական կապ սոցիալական ինստիտուտների միջև, և իրենց վրա են վերցնում սոցիալական կյանքի հիմնական ծանրաբեռնվածությունը, որը ավանդական ինստիտուտներն այլևս կրել չեն կարող:

ե. Սոցիալական հարաբերությունների համակարգը երկատվում է, ավանդական կապերին և ինստիտուտներին զուգահեռ գոյանում է հարաբերությունների նոր համակարգ: Վերջինս, իր վրա կրելով հասարակական կյանքի հիմնական ծանրաբեռնվածությունը, դառնում է բովանդակային, իսկ ավանդական հարաբերությունների և ինստիտուտների համակարգը՝ ձևական: Դրա պատճառներից են, օրինակ, սոցիալական ինստիտուտի հեղինակության անկումը, նրա նպատակների և գործունեության անհամապատասխանությունը, գլխավոր գործառույթների ձևական կատարումը և այլն:

զ. Սոցիալական ինստիտուտի գործունեությունը կարող է «անհատականացվել» և այլևս չկանոնակարգվել իրավական կամ ընդհանուր համաձայնության բարոյական նորմերով: Սոցիալական ինստիտուտի «անհատականացումը» ենթադրում է, որ այն դադարում է գործել համաձայն հասարակական պահանջմունքների և նպատակների, ուստի փոխում է իր գործառույթները՝ առանձին անհատների շահերին և նպատակներին համաձայն:

է. Երբ սոցիալապես անհրաժեշտ գործառույթի թերի իրականացումը կյանքի կոչի տվյալ ոլորտում տարերային գործունեություն իրականացնող նոր սոցիալական ինստիտուտներ, որոնք արդեն ո՛չ լեգալ են, ո՛չ էլ լեգիտիմ: Օրինակ՝ տնտեսական կառույցների թերի աշխատանքը կարող է այսպես կոչված «ստվերային տնտեսության» առաջացման պատճառ դառնալ, կամ սոցիալական կյանքի որևէ ոլորտի թերի կարգավորված լինելը և վերահսկողության բացակայությունը կարող են հանգեցնել, ասենք, կոռուպցիայի տարբեր դրսևորումների արմատավորման: Ճգնաժամի հաղթահարումն այս դեպքում իրականացվում է տվյալ սոցիալական ինստիտուտի փոփոխությամբ կամ այնպիսի նոր կառույցի ձևավորմամբ, որը կիրականացներ այդ հանրային պահանջմունքը:

Նշված օրինաչափությունները տեսանելի են բոլոր այն հասարակություններում, որտեղ կա ինստիտուցիոնալ դեֆիցիտ[6]: Վերջինս ուղեկցում է հասարակական հարաբերությունների փոխակերպման ողջ գործընթացը, երբ ավանդական ինստիտուտները չեն կարողանում արձագանքել արագ փոխվող սոցիալական իրականությանը, և դրանց

[6] Տե՛ս **Чебанов С. В., Найшуль В. А.** Социальная метадисциплина – формальная институционалистика // Третий Российский культурологический конгресс с международным участием «Креативность в пространстве традиции и инновации». Тезисы докладов. СПб., 2010, էջ 423-424:

կառուցվածքային ու գործառական փոխակերպումը հետ է մնում սոցիալական իրականության փոխակերպումից: Կամ հակառակը. երբ սոցիալական արագացող կյանքը և հասարակական փոփոխվող պահանջմունքները իրենց համարժեք արտահայտությունը չեն գտնում սոցիալական ինստիտուտների գործունեության մեջ:

Փիլիսոփայությունն առհասարակ ինստիտուցիոնալացման գործընթացն ուսումնասիրում է տարբեր առումներով՝ մեթոդաբանական (օր.՝ ստրուկտուրալիզմը), գոյաբանական (օր.՝ սոցիալական կեցության մշակութային և քաղաքացիական բովանդակությանը վերաբերող) և այլն: Մինչդեռ այդ գործընթացին առնչվող մարդաբանական հարցերն առավելապես սոցիալական փիլիսոփայության ուշադրության կենտրոնում են և պայմանավորված են, նախևառաջ, անհատի ու հասարակության վրա սոցիալական ճգնաժամերի ազդեցությամբ: Վերջինս, իր հերթին, դառնում է ինքնության ճգնաժամի և դրա հաղթահարման ուղիների, մարդու վարքի սոցիոմշակութային կարգավորիչների փոփոխության և այլ երևույթների պատճառ: Այս և հարակից հիմնահարցերը առավել ակնհայտ դրսևորվում են ժամանակակից տեղեկատվական հասարակություններում՝ պայմանավորված այդ թվում և տեղեկատվության ծավալների աննախադեպ աճով, զանգվածային ու սպառողական հոգեբանության տարածմամբ և առհասարակ՝ սոցիալական համակարգի կառուցվածքային փոփոխությամբ՝ սոցիալական ինստիտուտներից դեպի սոցիալական խմբեր: Տեղեկատվական հոսքերի ազդեցության տակ այսպես կոչված ավանդական սոցիալական ինստիտուտները՝ ընտանիքը, կրթությունը, բարոյականությունը և այլն, ենթարկվում են վերաարժեքորման, որի պատճառով հաճախ կորցնում են երբեմնի հեղինակությունը և գրավչությունը: Դրա հետևանքով փոխվում է մարդկանց սոցիալականացման «մեխանիկան». նրանք սկսում են միավորվել փոքր խմբերում, որոնք դառնում են սոցիալականացման օջախներ:

Գլոբալացման արդի պայմաններում սոցիալական ինստիտուտների գործառական բնութագրիչի փոփոխությունները կապված են նաև տեղեկատվական հասարակության և սպառողական հոգեբանության տարածման հետ: Վերջիններս ուղղակիորեն չեն հանգեցնում ինստիտուցիոնալ ճգնաժամի, սակայն բարենպաստ պայմաններ են ստեղծում սոցիալական ինստիտուտի հեղինակության անկման, գործառույթների փոփոխության կամ թերի իրականացման համար:

Ժամանակակից սոցիալական իրականության մեջ խնդրահարույց մի շարք հարցեր վերաբերում են նաև զանգվածային մշակույթի տարածմանը, որի հիմնական արժեքներն են զվարճանքը, հեդոնիզմը և սպառումը[7]: «Եվ իրոք, ժամանակակից քաղաքակրթությունը ասես հա-

[7] Տե՛ս **Никифоров А.** Философия науки: история и методология. М., 1998:

ճախորդների պակաս չունեցող «սպառման տոնավաճառ» լինի, ուր ինչ-որ բան գնելու ձգձգվող տենդը ամեն ինչ վերածել է ապրանքի: «Ունենալ թե լինել» ֆրոմյան երկընտրանքը մոտենում է իր հանգուցալուծմանը, և ***դեպի մարդը*** կողմնորոշված հասարակությունը (լինել) հաստատորեն բռնել է ***դեպի իրերը*** կողմնորոշված հասարակության ուղին (ունենալ)»[8]:

Դեռ ավելին՝ տեղի է ունենում նաև անցում իրերի սպառումից դեպի նշանների՝ հաջողության, մոդայի, ժամանակակից լինելու սպառում: Ուստի սպառումը եզակի գործողություններից վերածվում է ապրելակերպի, իսկ կյանքի սոցիալ-մշակութային մոդելում սկսում են գերակայել ոչ թե ազգային-էթնիկական, այլ հաճույքի և հարմարավետության գլոբալ մշակույթի տարրերը[9]: Բայց այսքանով չի սահմանափակվում զանգվածային մշակույթի ազդեցությունը: Վերջինս սահմանափակում է երբեմնի հեղինակավոր սոցիալական ինստիտուտների՝ ընտանիքի, եկեղեցու, բարոյականության, պետության և դրանց հետ կապված պարտավորությունների ու այլ նորմատիվ կարգավորիչների համակարգը, դրանց կատարումը դարձնում ոչ պարտադիր:

Ինստիտուցիոնալ փոփոխությունների և նորարարությունների մեծ ներուժ ունի ինչպես զանգվածային մշակույթը, այնպես էլ տեղեկատվական հասարակությունը, որոնց պարագայում տեղի է ունենում, օրինակ, թույլատրելիի և անթույլատրելիի, անհրաժեշտի և ցանկալիի մասին պատկերացումների արմատական փոփոխություն անհատական և հանրային գիտակցության մեջ: Սոցիալականացման ինստիտուտների և մարդու վարքը կարգավորող նորմատիվ համակարգի նպատակը՝ պատասխանատու անհատի ձևավորումը, դառնում է խնդրահարույց, և իր անհատական ցանկությունները հասարակական շահերի և սահմանափակումների հետ համատեղող մարդը հարաբերությունների նոր համակարգում, որը հիմնվում է հեդոնիզմի, հարմարավետ կյանքի և բարոյականության անհատականացված ընկալման վրա, դառնում է մարգինալ տեսակ[10]: «Պատահական չէ, օրինակ, որ հայ իրականության մեջ վերջին տարիների արմատական փոխակերպումների հետևանքով ծագել է լուսանցքային (մարգինալ) նույնականություն: Այդ նույնականության կրողներն են համարվում այն անհատները, որոնք դեռևս տատանվում են նախորդ և ներկա մշակույթների միջև՝ անհրաժեշտ չափով չտիրապետելով այդ մշակույթներից և

---

[8] **Է. Հարությունյան**, Համատեքստի հերթափոխը. մարդկային կեցության սոցիոմշակութային այլատեսակությունների ապականումը // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2016, № 1 (19), էջ 6:

[9] Սպառման սեմիոտիզացիայի մասին մանրամասն տե՛ս «Многоликая глобализация». М., 2004:

[10] Տե՛ս **Поликарпов В. С.** Философия безопасности. СПб. – Ростов-на-Дону, 2001:

ոչ մեկի նորմերին և արժեքներին»[11]: Հասարակությունում զուգահեռաբար աճում է վարքային մոդելների և արժեքային բազմազանությունը, որի ազդեցության տակ, հանրային կյանքը կառուցող և կարգավորող սոցիալական ինստիտուտների ճգնաժամի հետ միաժամանակ սկսում է սոցիալական նոր խմբերի ինքնակազմակերպման գործընթացը: Կարելի է ասել, որ տեղեկատվական հոսքերի մեծացող ծավալը փոխում է հանրային կյանքի ողջ համակարգը. հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքի փոխարեն ի հայտ են գալիս հաղորդակցական կապերն ու հարաբերությունները[12]: Դրա վառ օրինակ է ժողովրդավարական երկրներում քաղաքական վարքի ինստիտուցիոնալացմամբ պայմանավորված այն հակասությունը, երբ ժողովրդավարության նոր ձևավորվող կառույցները դադարում են քաղաքական կյանքում էական դերակատարում ունենալ: Տեղեկատվական հասարակության պարադոքսներից մեկը հենց դա է. որքան արդիական է դառնում հասարակությունը, այնքան դրանում ավելի մեծ դեր են ստանձնում ոչ թե ինստիտուտները և նորմերը, այլ որոշակի մարդիկ, փոքր խմբերը (օր.՝ քաղաքական թիմը) և նրանց վարկանիշը[13]:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ ժամանակակից հասարակություններում ընթացող ինստիտուցիոնալ ճգնաժամը պայմանավորված է ոչ թե կառավարման հմտությունների կամ գիտելիքի սակավությամբ, այլ մարդու հակասական բնույթի հերթական դրսևորումներից մեկն է, որի շրջանակներում փորձ է արվում չեղյալ համարել դեռ լուսավորականության շրջանից եկող ինտելեկտի, կրթության, բարոյականության և լուսավոր ապագայի իդեալները՝ փոխարենը իր կյանքի իմաստային դաշտը լցնելով հարմարավետության, անխռովության և արդիականության նշաններով:

1. Անհատի կամ անհատների շահերի, նպատակների, կարծիքի կամ նույնիսկ ճաշակի շուրջ ստեղծվող փոքր խմբերը, որոնք դառնում են սոցիալականացման և երբեմն նաև աշխարհաճանաչողության «օջախ», ժամանակակից պայմաններում չեն ենթարկվում և նույնիսկ կարող են հակադրվել համակեցության ընդհանուր սկզբունքներին ու նորմերին, գաղափարական և նաև գործնական հակադրության մեջ լինել ազգային, կրոնական, պետական այսպես կոչված «մեգա-իմաստներին»:

2. Դեռ ավելին՝ մարդու մշակութաստեղծ գործունեության ընթացքում անխուսափելիորեն առաջացող «մեգա-իմաստները»՝ իդեալ-

---

[11] **Է. Ա. Հարությունյան,** Վարքի սոցիոմշակութային շարժառիթների մարդաբանական բնութագիրը // «Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ» հոդվածների ժողովածու, Եր., 2008, պրակ 5, էջ 7:

[12] Տե՛ս **Луман Н.** Реальность массмедиа. М., 2005:

[13] Տե՛ս **Турен А.** Способны ли мы жить вместе? Равные и различные самобытности // "Новая постиндустриальная волна на Западе: Антология". М., 1999, էջ 465-491:

ները, ազգային նպատակները, ժամանակի մեջ հետաձգված շահերը և այլն, նաև քայքայվում են, իմաստազրկվում, դառնում ավելորդ և կորցնում հանրային կյանքը կառավարելու կամ ուղղորդելու իրենց ներուժը: Դա տեղի է ունենում բարդ համակարգերի ստորին և վերին մակարդակների (օր.՝ մարդ-հասարակություն) միջև գործող հետևյալ օրենքի համաձայն. «Բարդ հիերարխիկ համակարգում վերին մակարդակում բազմազանության աճը հնարավոր է ներքին օղակում բազմազանության կրճատման հաշվին, և հակառակը, ստորին մակարդակում բազմազանության աճը կրճատում է համակարգի բարձր մակարդակների բազմազանությունը»[14]: Այսպես, եթե «առաջին բնության» պարագայում խոսքը կենդանական և բուսական աշխարհի բազմազանության մասին է, ապա «երկրորդ բնության»՝ հասարակության պարագայում նկատի է առնվում մարդու և սոցիումի փոխհարաբերությունը կարգավորող իմաստների, նորմերի, նպատակների բազմազանությունը, որն անխուսափելիորեն աղքատանում է՝ ստորին (անհատի և փոքր խմբերի) մակարդակում բազմազանության ավելացման հետևանքով:

3. Միևնույն ժամանակ, որքան էլ նշված «մեգա-իմաստների» բազմազանությունը կրճատվի, և ձևակերպվեն դրանց մասնավոր՝ սպառողական հոգեբանությանը հարմար ընկալումներ՝ «հետո»-ի փոխարեն՝ «այժմ և հիմա», ունենալ՝ լինելու փոխարեն, գեղեցիկի փոխարեն՝ հաճելի և այլն, դրանք անկարող են կառուցարկելու և սպասարկելու մարդու կենսագործունեության հիմքում ընկած կենսաբանական, սոցիալական և հոգեկան պահանջմունքների ողջ համակարգը: Դեռ ավելին՝ որքան շատ է մարդ տրվում իր բնական վիճակին հարազատ «հաճույքի սկզբունքին»[15], այնքան ավելի է կտրվում իրեն իսկ սոցիալական և մշակութային էակ դարձնող մարդաստեղծ «մեգա-իմաստներից»՝ ճշմարտություն, արժեք, ազգ, բարոյականություն և այլն, քանի որ հրաժարվում է ինտելեկտուալ և հոգեկան լարված կյանք վարելուց «մշակույթների սահմանագծում, որտեղ և միայն հնարավոր է մշակույթը»[16], և «ընդամենը ցանկանում է, որ մշակույթը ոչ թե «անհանգստացնի» իրեն, այլ զբաղեցնի»[17]:

4. Այդ անխոով ապրելակերպին տրվող և կյանքը որպես հաճելի

---

[14] Օրենքի առաջին ձևակերպման համար տե՛ս **Седов Е.** Информационные критерии упорядоченности и сложности организации структуры систем // «Системная концепция информационных процессов». Выпуск 3, Сборник трудов ВНИИ системных исследований, М., 1988: Հետագայում մասնագիտական գրականության մեջ տարածվել է օրենքի՝ Ա. Նազարեթյանի մեկնաբանությունը (տե՛ս **Назаретян А. П.** Цивилизационные кризисы в контексте универсальной истории: синергетика, психология и футурология. М., 2001, էջ 183):

[15] **Է. Հարությունյան**, Համատեքստի հերթափոխը..., էջ 9:

[16] **Библер В. С.** Михаил Михайлович Бахтин, или Поэтика и культура. М., 1991, с. 76.

[17] **Է. Հարությունյան**, Համատեքստի հերթափոխը..., էջ 10:

ժամանց ընկալող մարդն այլևս սոցիալական ինստիտուտների նկատմամբ չի ձևակերպում հեռահար և միայն իր հետ փոխհամաձայնության արդյունքում առաջացող պահանջներ, ինչը հանգեցնում է այն բանին, որ սոցիալական ինստիտուտները մի կողմից կտրվում են սոցիալական իրականության մեջ ունեցած արմատներից (պահանջմունքներ և գործառույթներ), իսկ մյուս կողմից, չվերանալու նպատակով, իրենց համար նոր հիմքեր են ստեղծում՝ հարմարվելով «ժամանակակից» մշակույթին և այն կրող մարդուն: Արդյունքը լինում է այն, որ սոցիալական ինստիտուտներն ապամարդկայնանում են. եթե ժամանակին նրանք կոչված էին զարգացնելու և օբյեկտիվացնելու անհատի մարդկային էությունը (բանականություն, ստեղծագործություն, բարոյականություն, ճաշակ) և այդ ճանապարհով «փոքր կենսաբանական էակից մեծ սոցիալական մարդ» ստեղծելու, ապա ժամանակակից պայմաններում սոցիալական ինստիտուտները կարծես «ջանում են» լրացուցիչ անգամ չանհանգստացնել մարդուն, եթե նա կատարում է իրավական, ֆինանսական, ինտելեկտուալ և բարոյական ***նվազագույն*** պահանջները:

5. Սակայն չկա ոչ մի երաշխիք, որ սոցիալական ինստիտուտները անհատականի և հանրայինի լղոզված սահմանների ժամանակակից իրավիճակում կսահմանափակվեն միայն արիստոտելյան Zoon politikon-ի սեփականաշնորհմամբ և չեն տարածվի դեպի մարդու էության խորքում թաքնված Homo Sapiens (բանական էակ), Homo Creator (ստեղծագործող էակ), Homo Moralis (բարոյական էակ) և Homo Sensitive (հուզական էակ):

Բանալի բառեր – *ինստիտուտ, սպառում, տեղեկատվություն, տեղեկատվական հասարակություն, նորմ, սոցիալական գործառույթ, զանգվածային մշակույթ*

МОВСЕС ДЕМИРЧЯН – ***Причины, закономерности и последствия современного институционального кризиса.*** – Развитие современного информационного общества невозможно без противоречий и кризисов, которые особенно остро проявляются, когда ценности и нормы, регулирующие жизнь людей, поддаются свободной интерпретации и переоценке. В то же время новые смыслы не являются общеобязательными, что ведёт к переустройству всей системы общественных отношений. Вместо переживающих кризис социальных институтов – семьи, образования, морали – роль социализации берут на себя коллективы и группы. Одновременно разрушаются регулирующие социально-культурную жизнь «мега-смыслы» – нация, государство, истина, мораль. Это приводит к их секуляризации в личностном и общественном сознании. Человек, таким образом, выступает в социальных отношениях не как созидатель, а лишь как потребитель диктуемых социальными институтами минимальных смыслов и ценностей, низведённых до уровня «товаров».

Ключевые слова: *институт, потребление, информация, информационное общество, норма, социальная функция, массовая культура*

MOVSES DEMIRCHYAN – ***Causes, Regularities and Consequences of the Current Institutional Crisis.*** – The development of society cannot be imagined without contradictions and crises, which are particularly acute in today's information society, where values and norms governing people's lives are being freely interpreted and re-evaluated. At the same time, new meanings are not generally binding, leading to reconstruction of the whole system of social relations, and instead of going through a crisis of social institutions – family, education, morality, etc., the role of socialization take the teams and groups.

Simultaneously, the destruction of regulating social and cultural life <mega-meanings> – nation, state, truth, morality, etc., leads to their secularization in the personal and public consciousness. Man, this way acts in social relationships not as a creator, but only as a consumer dictated by social institutions minimal meanings and values, downmixed to <goods>.

Key words: *institution, consumption, information, the information society, the norm, social function, mass culture*